10 դեկտեմբերի, 2023 թ.

ԱՐՑԱԽԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ

ՈՒՂԵՐՁԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Հասցեատերեր՝ ՄԱԿ Գլխավոր քարտուղար, ՄԱԿ Անվտանգության խորհուրդ, ԵԱՀԿ գործող նախագահ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ, Եվրոպայի Խորհուրդ (Գլխավոր քարտուղար, ԵԽԽՎ նախագահ, Նախարարների խորհրդի նախագահ), Եվրամիություն Խորհուրդի նախագահ, Եվրոպական Խորհրդարանի նախագահ, ԱՊՀ Գլխավոր քարտուղար, ՀԱՊԿ Գլխավոր քարտուղար, ՆԱՏՕ Գլխավոր քարտուղար:

Ոչ մի ազատ ժողովուրդ չի կարող հրաժարվել իր ինքնիշխան իրավունքներից և ենթարկվել իր համար օտար պետության գերիշխանությանը, առավել ևս մի պետության, որը ղեկավարվում է իր անպատժելիությամբ արբեցած ավտորիտար, կոռումպացված և ռասիստական ռեժիմի կողմից:

Մեր ընդհանուր որոշումը՝ լրել մեր Հայրենիքը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը, մեր տները, թողնել Սբ. Մկրտչի մասունքները, մեր հայկական եկեղեցիներն ու մեր նախնիների գերեզմանները, որոնք մենք պաշտպանել ենք դարեր ի վեր, ապացույց է ողջ աշխարհին, որ Արցախի ժողովրդի համար ազատությունը բարձրագույն արժեք է: Այս ճարահատ որոշումն ընդունվել է շարունակական ցեղասպանական գործողությունների և մեր գլխին կախված գոյաբանական լուրջ սպառնալիքների պայմաններում:

Մենք կայացրինք այդպիսի որոշում, քանի որ նրանք, ովքեր իրենց համարում են մարդու իրավունքների ու ազատությունների ջատագովներ ու պաշտպաններ, որոշեցին հանուն Հայաստանի ու Ադրբեջանի միջև թվացյալ խաղաղության ձեռքբերման և հանուն իրենց աշխարհաքաղաքական շահերի մերժել սեփական հայրենիքում արժանապատիվ ապրելու և ինքնորոշման մեր իրավունքները:

Մենք հեռացանք, քանի որ միայն այդպես կարող էինք ապահովել մեր անվտանգությունը և պահպանել մեր մարդկային ու ազգային արժանապատվությունն ու մեր գենաֆոնդը, քանի որ միայն այդպես կարող էինք բացահայտել այն մեծ սուտը, որի վրա հիմնված էր հակամարտության միակողմանի և ուժային լուծման քաղաքական գաղափարը, որը ենթադրում էր մեզ և մեր երեխաներին ստիպել հպատակվելու և հավատարմության երդում տալու մեզ ոչնչացնող և ատող վարչակարգին:

Ավելի քան երեք տասնամյակ շարունակ մենք մեր բոլոր ուժերով պաշտպանել ենք մեր երեխաների խաղաղության և ազատ զարգացման իրավունքը: Մենք դիմակայում էինք քաղաքական գործարքներին, որոնցով մերժվում էր սեփական Հայրենիքում ապրելու մեր ինքնիշխան իրավունքը, որը ձեռք է բերվել բազմաթիվ մարդկանց կյանքի գնով, հանուն մեր ազգային արժանապատվության ու ինքնության պահպանման՝ մի քանի սերունդների դարավոր պայքարի ընթացքում ահռելի կորուստների գնով: Եվ այս պայքարը չի ավարտվել: Մենք վստահ ենք, որ ճշմարտության և արդարության զորությամբ կվերադարձնենք մեր Հայրենիքը:

Նրանց համար, ովքեր կարծում են, թե աշխարհը կարելի է կառավարել ստով ու բռնությամբ, կրկնում ենք.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը խորհրդարանական ճանապարհով հռչակվել է 1991 թվականի սեպտեմբերի 2-ին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի օրինական իշխանությունների կողմից, այն բանից հետո, երբ Ադրբեջանի իշխանությունները հայտարարեցին ԽՍՀՄ-ից դուրս գալու որոշման մասին: ԼՂՀ-ի ձևավորման մասին քաղաքական հռչակագիրը հիմնված էր այն ժամանակ գործող միութենական օրենքի իրավական նորմի և արցախցիների կամարտահայտության վրա, որը դրսևորվել է համաժողովրդական հանրաքվեով:

Մեր ինքնորոշման իրավունքը ճանաչվել է նույնիսկ Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի իշխանությունների կողմից 1920 թվականին, հիմք է հանդիսացել 1923 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ձևավորման համար, ամրագրվել

է ԽՍՀՄ սահմանադրությամբ, Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրությամբ և «ԼՂԻՄ-ի մասին» Ադր.ԽՍՀ օրենքով, այն պահպանվել է «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» 1990 թ. ապրիլի 3-ի դաշնային օրենքով, ինչպես նաև խարսխված է ՄԱԿ-ի կանոնադրության և 1966 թ. ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի վրա:

1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեն հաստատեց, որ ընտրողների բացարձակ մեծամասնությունը պաշտպանել է մեր Հանրապետության անկախությունը հռչակելու որոշումը: Ցեղասպանական պաշարման և ռազմական ագրեսիայի պայմաններում ժողովրդավարական չափորոշիչներով ընտրված օրինական խորհրդարանը 1992 թվականի հունվարի 6-ին ընդունել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակագիրը: Այս ընտրության համար իրենց կյանքով վճարեցին մեր հազարավոր հայրենակիցները:

1992 թվականին ԵԱՀԽ/ԵԱՀԿ բոլոր անդամ - պետությունները ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչների իրավունքը՝ մասնակցելու ԵԱՀԿ միջազգային համաժողովին, որը լիազորված է կարգավորելու ղարաբաղյան հակամարտությունը:

Մեր ժողովուրդը 2006 թվականին հանրաքվեով հաստատել է Հանրապետության Սահմանադրությունը, որով սահմանվել է Լեռնային Ղարաբաղի օրինական ներկայացուցիչների ընտրության կարգը և նրանց լիազորությունները, իսկ 2017 թվականի հանրաքվեով ժողովուրդը հաստատել է նոր Սահմանադրությունը: Այս Սահմանադրությունը եղել և մնում է միակ հիմնարար օրենքը, որով առաջնորդվում և որին ենթարկվում են մեր Հանրապետության քաղաքացիներն իրենց կամքով:

Հետևաբար, մենք՝ Արցախի Հանրապետության քաղաքացիներս, ձգտելով պաշտպանել մեր օրինական իրավունքներն ու մեր Հանրապետության սուբյեկտությունը, պնդում ենք, որ ինքնորոշված Լեռնային Ղարաբաղը ոչ մի մասնակցություն չի ունեցել ինքնահռչակ Ադրբեջանի Հանրապետության սահմանադրության և իշխանության մարմինների ձևավորման գործում, այլ, ընդհակառակը, հայտարարել է սեփական անկախության մասին: Սակայն նորաստեղծ Ադրբեջանը չէր թաքցնում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր անհիմն հավակնությունները:

Հենց այսպիսի պայմաններում է միջազգային հանրությունն արձանագրել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ տարաձայնությունների առկայության փաստը՝ ճանաչելով տվյալ տարածքի վիճելիությունը: Հայաստանն ու Ադրբեջանն այն ժամանակ ԵԱՀԽ/ԵԱՀԿ անդամ-պետություններ են դարձել պայմանով, որ ընդունում են Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցում տարաձայնությունների առկայության փաստը և համաձայնվում են, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը որոշվի ԵԱՀԽ/ԵԱՀԿ հովանու ներքո անցկացվելիք խաղաղության համաժողովում: Երկու պետություններն էլ հիմնախնդիրը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու միջազգային պարտավորություն են ստանձնել:

Սակայն, ԵԱՀԽ/ԵԱՀԿ անդամ դառնալով՝ Ադրբեջանն անմիջապես խախտեց վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու իր միջազգային պարտավորությունը: Պաշտոնական Բաքուն ապօրինի ուժ կիրառեց ԼՂՀ-ի՝ որպես վիճելի տարածքի նկատմամբ, նպատակ ունենալով խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշմանը նվիրված միջազգային համաժողովի անցկացումը: Ստեղծված իրավիճակում Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն օգտվել է ինքնապաշտպանության իր իրավունքից: 1992-94 թթ. Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիան պարտությամբ պսակվեց այդ երկրի համար ու հանգեցրեց տարածքային զգալի կորուստների: Կարևոր է ընդգծել, որ ԼՂՀ-ի ու Ադրբեջանի զորքերի շփման գիծը միջազգայնորեն ճանաչվել է:

Այդուհանդերձ, հակամարտության երբեմ տասնամյակի ընթացքում ոչ մի պետական գործիչ, քաղաքական գործիչ կամ իրավական իշխանության որևէ միջազգային մարմին չի պատասխանել մի պարզ հարցի. ինչու՞ Ադրբեջանը և այլ պետություններ, որոնք իրավական առումով ճանաչել են օրենքի գերակայության սկզբունքին հետևելու պարտավորությունը՝ որպես իրենց պետականության հիմնարար սկզբունք, կարող են չկատարել այս սկզբունքից բխող՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը հարգելու պարտավորությունը և ուժի չկիրառման սկզբունքը:

Սույն հանգամանքն Ադրբեջանին թույլ է տվել սեփական քաղաքականության գինանոցում պահպանել բնիկ հայ ժողովրդի բռնի տեղահանման ճանապարհով Լեռնային Ղարաբաղի զավթման ռազմավարությունը: Այդ երկրի նախահարձակ քաղաքականությունն այդպես էլ միջազգային պատշաճ դատապարտման չի արժանացել: Միջազգային ակտորները, ի հեռուկս բնակչությունը ցեղասպանությունից պաշտպանելու համար պատասխանատվություն ստանձնելու իրենց միջազգային պարտավորությունների (Responsibility to Protect), ցավոք, պատշաճ ուշադրություն չդարձրին Արցախի բնակչության

լրջագույն գոյաբանական սպառնալիքների մասին Արցախի խորհրդարանի 2023 թ. հուլիսի 27-ի ուղերձին և չկանխեցին Ադրբեջանի հանցավոր գործողությունները, ինչի արդյունքում Ադրբեջանը 2023 թ. սեպտեմբերին հերթական ռազմական ագրեսիան ձեռնարկեց ԼՂՀ-ի դեմ և Արցախի բնիկ հայ ազգաբնակչությանն արտաքսեց իր պատմական հայրենիքից:

Հարկ է հիշեցնել, որ 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարի կնքումից հետո Ադրբեջանի նախագահը հայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն այլևս գոյություն չունի, և որ բոլորը պետք է համակերպվեն Երկրորդ ղարաբաղյան պատերազմի արդյունքներին: Ձգտելով նենգափոխել հակամարտության էությունը՝ Ադրբեջանն իր դիվանագիտական բառապաշարի մեջ մտցրեց «Հայաստանի կողմից ադրբեջանական հողերի զավթման» մասին կեղծ պատումը, որի միջոցով էլ փորձում է խլացնել իր իսկ ագրեսիվ ցեղասպանական քաղաքականության արձագանքները:

Մենք մտադիր չենք փոխելու սեփական Հայրենիքի նկատմամբ մեր սկզբունքները, համոզմունքներն ու իրավունքները՝ ո՛չ ուժի, ո՛չ բնաջնջման սպառնալիքի, ո՛չ ահսորի, ո՛չ էլ որևէ այլ քաղաքական հանգամանքներում:

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհն այսօր կանգնած է ընտրության առաջ՝ կամ վերականգնել միջազգային կարգը Լեռնային Ղարաբաղում, հիմնված ինքնորոշման իրավունքի և ժողովուրդների ու մարդու այլ իրավունքների ու ազատությունների վրա, կամ լռելյայն համաձայնվել, որ շրջափակումը, ռազմական ագրեսիան, ցեղասպանությունը և օկուպացիան հակամարտությունների լուծման օրինական միջոցներ են հանդիսանում:

Այսօր բազմաթիվ երկրների առաջնորդներ խոսում են Լեռնային Ղարաբաղ հայերի վերադարձի անհրաժեշտության մասին: Սակայն, մենք գտնում ենք, որ սեփական Հայրենիք մեր ժողովրդի խաղաղ, անվտանգ և արժանապատիվ վերադարձի ու կյանքի համար անհրաժեշտ են հետևյալ անվիճարկելի պայմանները.

Առաջին՝ մենք բացառում ենք Արցախի Հանրապետության քաղաքացիների վերադարձը Ադրբեջանի իրավազորության ներքո: Ադրբեջանական զինված ուժերը, ոստիկանությունը և վարչակազմը պետք է ամբողջությամբ դուրս բերվեն Արցախի Հանրապետության տարածքից, ներառյալ Շահումյանի շրջանը, որտեղ 1992 թ. իրականացված էթնիկ զտման համար Ադրբեջանը լիակատար պատասխանատվություն է կրում:

Երկրորդ՝ Արցախի Հանրապետության ողջ սահմանի երկայնքով պետք է տեղաբաշխվեն ՄԱԿ-ի միջազգային բազմազգ խաղաղապահ ուժեր, և ստեղծվի ապառազմականացված գոտի:

Երրորդ՝ Լաչինի միջանցքը պետք է փոխանցվի ՄԱԿ-ի վերահսկողությանն ու կառավարմանը:

Չորրորդ՝ Արցախի Հանրապետության տարածքը պետք է փոխանցվի ՄԱԿ-ի կառավարմանը՝ բոլոր փախստականների վերադարձի, ժողովրդավարական և իրավական հաստատությունների ստեղծման և տնտեսության վերականգնման համար պայմաններ ապահովելու համար: Բոլոր փախստականները պետք է ունենան հավասար կարգավիճակ, հավասար իրավունքներ և ենթարկվեն անցումային շրջանի ընդհանուր կանոններին մինչ հանրաքվեն, որը կհաստատի Լեռնային Ղարաբաղի վերջնական քաղաքական կարգավիճակը, որի արդյունքը իրավաբանորեն կճանաչվի բոլոր պետությունների կողմից:

Հինգերորդ՝ պետք է լիովին բացառվի Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության քաղաքացիների՝ հակամարտության ողջ ընթացքի հետ կապված ցանկացած մեղադրանքով քրեական հետապնդման հնարավորությունը: Բոլոր ձերբակալված և արդեն դատապարտված հայերը պետք է անհապաղ ազատ արձակվեն: Մենք պատրաստ ենք ճանաչել միջազգային տրիբունալի իրավասությունը՝ հետաքննելու յուրաքանչյուր ռազմական հանցագործություն, որոնցով մեղսագրվում են մեր քաղաքացիները, սակայն պայմանով, որ այդ տրիբունալը նույնկերպ կքննի բոլոր ռազմական հանցագործությունները, որոնք կատարվել են Ադրբեջանի քաղաքացիների և նրա վարձկանների կողմից:

Մենք պատրաստ ենք ըստ ամենայնի նպաստել հակամարտության խաղաղ լուծմանը, որը հիմնված կլինի ինքնորոշման իրավունքի և ժողովուրդների ու մարդու՝ միջազգայնորեն ճանաչված այլ իրավունքների ու ազատությունների լիակատար հարգման վրա:

Ստորագրողներ

1. «Միասնական Հայրենիք» կուսակցություն

2. «Վաղվա Արցախ» կուսակցություն
3. «Արցախի հեղափոխական» կուսակցություն
4. Արցախի Հանրապետական կուսակցություն
5. Արցախի Ռամկավար ազատական կուսակցություն
6. «Միացյալ Հայաստան» կուսակցություն
7. «Արցախի ապագան» կուսակցություն
8. «Հզոր միասնական Հայաստան» կուսակցություն
9. Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյան
10. Ստեփանակերտ քաղաքի քաղաքապետ՝ Դավիթ Սարգսյան
11. Հադրութ քաղաքի քաղաքապետ՝ Վահան Սավադյան
12. Շուշի քաղաքի քաղաքապետ՝ Արծվիկ Սարգսյան
13. Մարտունու շրջանի Ճարտար քաղաքի քաղաքապետ՝ Վլադիկ Հովհաննիսյան
14. Մարտակերտ քաղաքի քաղաքապետ՝ Միշա Գյուրջյան
15. Ասկերան քաղաքի քաղաքապետ՝ Շամիրյան Հայկ
16. Քարվաճառ քաղաքի քաղաքապետ Վարսենիկ Գրիգորյան
17. Ավետարանոց համայնքի ղեկավար՝ Սմբատ Մադաթյան
18. Վանք համայնքի ղեկավար՝ Անդրեյ Սարգսյան
19. Հովսեփավան համայնքի ղեկավար՝ Կարեն Դանիելյան
20. Քյուրաթաղ համայնքի ղեկավար՝ Զորի Պողոսյան
21. Թաղոտ համայնքի ղեկավար՝ Արմեն Ղուկասյան
22. Թաղասեռ համայնքի ղեկավար՝ Արմեն Բուդաղյան
23. Վարդաշատ համայնքի ղեկավար՝ Ռուսլան Սողոմոնյան
24. Կարմրակուռ համայնքի ղեկավար՝ Սերգեյ Հակոբյան
25. Ուխտաձոր համայնքի ղեկավար՝ Վրեժ Բալասանյան
26. Ազոխ համայնքի ղեկավար՝ Արայիկ Արզումանյան
27. Նորաշեն համայնքի ղեկավար՝ Արմեն Ավետիսյան
28. Տող համայնքի ղեկավար՝ Վարդան Գրիգորյան
29. Տումի համայնքի ղեկավար՝ Էդիկ Մոսիյան
30. Ջրակուս համայնքի ղեկավար՝ Վալերի Բաբայան

31. Դրախտիկ համայնքի ղեկավար՝ Վիտալի Միրզոյան

32. Այգեստան համայնքի ղեկավար՝ Վիտալի Շամիրյան

33. Առաջամուղ համայնքի ղեկավար՝ Սուսաննա Աղաբաբյան

34. Բանաձոր համայնքի ղեկավար՝ Կամո Մուսայելյան

35. Առաքել համայնքի ղեկավար՝ Կայծեր Տիգրանյան

36. Ծամձոր համայնքի ղեկավար՝ Կարո Մինասյան

37. Հակակու համայնքի ղեկավար՝ Խաչիկ Հակոբյան

38. Ակնաղբյուր համայնքի ղեկավար՝ Արթուր Բաբաջանյան

39. Խանձաձոր համայնքի ղեկավար՝ Արմեն Մկրտչյան

40. Խծաբերդ համայնքի ղեկավար՝ Ալեքսանդր Ավանեսյան

41. Ծակուռի համայնքի ղեկավար՝ Կամո Խաչատրյան

42. Հարթաշեն համայնքի ղեկավար՝ Վալերի Սարգսյան

43. Հին Թաղեր համայնքի ղեկավար՝ Էդիկ Այվազյան

44. Մեծ Թաղեր համայնքի ղեկավար՝ Անդրեյ Ալթունյան

45. Մարիամաձոր համայնքի ղեկավար՝ Նորայր Արզումանյան

46. Մոխրենես համայնքի ղեկավար՝ Արտիկ Պողոսյան

47. Արևշատ համայնքի ղեկավար՝ Արթուր Հայրապետյան

48. Խնձրիստան համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Ավանեսյան

49. Նոր Վերինշեն համայնքի ղեկավար Սամվել Մնացականյան

50. Բերձորի քաղաքապետ Նարեկ Ալեքսանյան

51. Գետափի համայնքի ղեկավար Կարեն Մանուկյան

52. Ալաշկերտ համայքնի ղեկավար Բագրատ Նավասարդյան

53. Մուշ համայնքի ղեկավար Պետրոս Ավետիսյան

54. Երիցվանք համայնքի ղեկավար Զարզանդ Միաքայելյան

55. Ծաղկաբերդ համայնքի ղեկավար Արշակ Հարությունյան

56. Աղանուս համայնքի ղեկավար Արտակ Աբրահամյան

57. Աղավնատուն համայնքի ղեկավար Համլետ Խաչատրյան

58. Այգեկ համայնքի ղեկավար Մելիք Մելիքյան

59. Այգեհովիտ համայնքի ղեկավար Գոռ Հակոբյան

60. Արտաշավի համայնքի ղեկավար Էդուարդ Միքայելյան

61. Արախիշ համայնքի ղեկավար Աշոտ Սիմոնյան
62. Գանձա համայնքի ղեկավար Հարություն Թադևոսյան
63. Գետամեջ համայնքի ղեկավար Գրիշա Մելքոնյան
64. Գողթանի համայնքի ղեկավար Հակոբ Պողոսյան
65. Դրախտաձոր համայնքի ղեկավար Գևորգ Սարգսյան
66. Ծիծեռնավանք համայնքի ղեկավար Սիմոն Հարությունյան
67. Կերեն համայնքի ղեկավար Վրեժ Հարությունյան
68. Հակարի համայնքի ղեկավար Գառնից Չոբանյան
69. Հայկազյան համայնքի ղեկավար Արմեն Չոմոյան
70. Ղազարապատ համայնքի ղեկավար Կարապետ Հակոբյան
71. Մոշաթաղ համայնքի ղեկավար Սիրակ Սողոմոնյան
72. Սոնասար համայնքի ղեկավար Անդրանիկ ԿյուրեղյանՆ
73. Ծար համայնքի ղեկավար Ս. Սիմոնյան
74. Գետաշեն համայնքի ղեկավար Լավրենտ Գևորգյան
75. Ակնաբերդ համայնքի ղեկավար Համլետ Սայիլյան
76. Ձուար համայնքի ղեկավար Սոս Չլինգարյան
77. Նոր Մանաշիդ համայնքի ղեկավար Հ. Սարգսյան
78. Նոր Բրաջուր համայնքի ղեկավար Արայիկ Հայրապետյան
79. Նոր Խարխափուտ համայնքի ղեկավար Միքայել Մելքոնյան
80. Հավսաթաղ համայնքի ղեկավար Գ. Վանյան
81. Դադիվանք համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյան
82. Հին շեն համայնքի ղեկավար Սարգսյան Սամվել
83. Եղցահող համայնքի ղեկավար Հակոբյան Արտակ
84. Մեծ շեն համայնքի ղեկավար Դավիդյան Դավիդ
85. Լիսագոր համայնքի ղեկավար Գագիկ Նասիբյան
86. Քարինտակ համայնքի ղեկավար Աշոտ Հակոբյան
87. Քիրսավան համայնքի ղեկավար Սամվել Հայիրյան
88. Բերքաձոր համայնքի ղեկավար Զարինե Մեքիյան
89. Խանցք համայնքի ղեկավար Առնոլդ Աբրահամյան
90. Իվանյան համայնքի ղեկավար Բորիս Կագրամանյան
91. Ձագլիկ համայնքի ղեկավար Դավիթ Ազարյան
92. Հաթերք համայնքի ղեկավար Վարդան Գրիգորյան
93. «Անալիտիկոն» հանդես
94. «Վերածնված հայրենիք» ՀԿ

95. «Հայկի Սերունդ» ՀԿ
96. Ռադիո «Մեր սարերը»
97. «Ազգի Ակունք» ՀԿ
98. «Զարգացում» երիտասարդական ՀԿ
99. «Արցախի կամավորական շարժում» ՀԿ
100. Արցախի գրողների միություն
101. Արցախի ժուռնալիստների միություն
102. «Արցախի Արծիվներ» ՌՀՄ ՀԿ
103. «Արցախի լրատվական» լրատվական գործակալություն
104. «Դիզակ» լրատվական գործակալություն
105. «Լույս» լրատվական գործակալություն
106. «Սերունդ» լրատվական գործակալություն
107. «Արցախօր» լրատվական գործակալություն
108. «Daily Artsakh» լրատվական գործակալություն
109. «Արցախն այսօր» լրատվական գործակալություն
110. «Artsakh Reports» լրատվական գործակալություն
111. «Artsakh News» լրատվական գործակալություն
112. Արցախի մշակութային ժառանգության պահպանության հանրային խորհուրդ
113. «Առաջ Արցախ» ՀԿ
114. «Մտքի ուժը» գիտական ՀԿ
115. «Անել» ՀԿ
116. «Artsakh Speaks» լրատվական գործակալություն
117. «Միացյալ Հայաստան» հայրենասիրական ՀԿ
118. «Աֆղանստանի պատերազմի վետերանների միություն» ՀԿ
119. «Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
120. «Բաց հասարակություն» ՀԿ
121. «ԼՂՀ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԿ
122. «ԼՂՀ ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ» ՀԿ

123. «Արմատ և սաղարթ» ՀԿ
124. «Իմ իրավունքը» քաղաքացիական շարժում
125. «Երիտասարդ իրավաբաններ» ՀԿ
126. «Հանրային դիվանագիտության ինստիտուտ» ՀԿ
127. «ՄՈՆԹԵ» ռազմահայրենասիրական ՀԿ
128. «ԱԶԱԿՑՈՒԹՑՈՒՆ ԱՐՑԱԽԱՀԱՑՈՒԹՑԱՆԸ» ՀԿ
129. «Էկո Արցախ» ՀԿ
130. «Վիտա» ՀԿ
131. «Երիտասարդական հանրային հետազոտությունների կենտրոն» ՀԿ
132. «Լուսաբար» թերթ
133. «Ազատ Արցախ» թերթ
134. «Միտք» ՀԿ
135. «Արցախի պահեստազորի սպաների միություն» ՀԿ
136. «ԳԵՆ» նախաձեռնությունների կենտրոն
137. «Փախստական կանանց միավորում» ՀԿ
138. «Երիտասարդների միավորում հանուն արդարության» ՀԿ
139. «Երիտասարդական հանրային հետազոտությունների կենտրոն» ՀԿ
140. «Ասկերանի զարգացման կենտրոն» ՀԿ
141. «Հավասար հնարավորությունների հայրենիք» հասարակական շարժում
142. ԱՀ Երաժիշտների միություն ՀԿ
143. «Դիզակ Արտ» մշակութային ՀԿ
144. Արցախի Հանրային Հեռուստատեսություն
145. Արցախի Հանրապետության անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն ՀԿ
146. ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների միություն ՀԿ
147. «Արցախպրես» լրատվական գործակալություն
148. «Վերադարձ դեպի Դիզակ» ՀԿ
149. «Փախստականները եւ միջազգային իրավունքը» քաղաքացիական հասարակության ցանց
150. «Partners» իրավապաշտպան գրասենյակ

151. Արցախի նկարիչների միություն
152. «Ռազմավարական Հետազոտությունների Անկախ Կենտրոն» ՀԿ
153. «Հանուն Հադրութի» ՀԿ
154. ԼՂՀ «Մայրություն» ՀԿ
155. «Հարմոնյա» ՀԿ
156. «Արցախի Աշխարհազոր»Ռազմահայրենասիրական կազմակերպություն
157. «Վերադարձ դեպի Քաշաթաղ» ՀԿ
158. «Արցախակերտում» ՀԿ
159. «Կամք» ՀԿ
160. «Արցախի կույրերի միություն» ՀԿ
161. «Ինչ Որտեղ Երբ» ինտելեկտուալ ակումբ
162. «Կենդանիների պաշտպանության միություն» ՀԿ
163. «Արցախյան երրորդ պատերազմում զոհված և անհայտ կորած զինծառայողների հարազատների Միություն» ՀԿ
164. ԼՂՀ «Արհմիությունների ֆեդերացիա» ՀԿ
165. ԼՂՀ «Հոգևոր վերածնունդ» ՀԿ
166. «Արցախի կանչ շարժում» ՀԿ
167. «Կաճառ» գիտական կենտրոն ՀԿ
168. «Հավատ և արիություն» ռազմահայրենասիրական Միություն» ՀԿ
169. «Շուշիի բռնի տեղահանված հայ ազգաբնակչություն» ՀԿ
170. «Արցախի դիվանագետների միություն» ՀԿ
171. «Թեֆեյան» ՀԿ
172. «Արցախյան պատերազմի վիրավորների միություն» ՀԿ
173. «Ավագների խորհուրդ» ՀԿ
174. «Երրորդ ուժ պլյուս»թերթ
175. «Գրողների արցախյան միավորում» ՀԿ
176. «Արցախի Արվեստագործների Միություն» ՀԿ
177. «Վերադարձ Քարվաճառ» ՀԿ
178. «Շուշիի Դեօկուպացիա» ՀԿ

179. «Դիզակ» թերթ
180. «Կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության »ՀԿ
181. «Արցախյան շեշտադրում » բարեգործական ՀԿ
182. «Արցախի ՈՒՀԱ Ասոցիացիայի» ՀԿ
183. «Հանուն հայրենիքի» ՀԿ
184. Ռադիո Հայ-Ստեփանակերտ ռադիոկայան
185. ԼՂՀ մարզական տուրիզմի ֆեդերացիա
186. «Արցախի ազգային ավանդական կարատե-դո ֆեդերացիա» ՀԿ
187. «ԱՀ ուշու ֆունգ ֆուի ֆեդերացիա »ՀԿ
188. «ԼՂՀ Բասկետբոլի ֆեդերացիա» ՀԿ
189. «ԼՂՀ վոլեյբոլի ֆեդերացիա» ՀԿ
190. «ԼՂՀ հանդբոլի ֆեդերացիա» ՀԿ
191. «ԼՂՀ սեղանի թենիսի ֆեդերացիա» ՀԿ
192. «ԼՂՀ թեթև աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ
193. ԼՂՀ «Ջյուդոյի ֆեդերացիա» ՀԿ
194. «Արցախի ըմբշամարտի ֆեդերացիա » ՀԿ
195. «Արցախի թաեքվոնդոյի ֆեդերացիա» ՀԿ
196. «Արցախի սպորտային մարմնամարզության ֆեդերացիա» ՀԿ
197. «Արցախի ծանրամարտի ասոցիացիա» ՀԿ
198. «Արցախի օլիմպիական և պրոֆեսիոնալ բոնցֆամարտի ֆեդերացիա» ՀԿ
199. «Արցախի կարատե-դո ֆեդերացիա» ՀԿ
200. ԱՀ «Սամբոյի և ազգային կոխ ըմբշամարտի ֆեդերացիա» ՀԿ
201. «Շախմատի ֆեդերացիա» ՀԿ
202. « ԼՂՀ ուժային եռամարտի ֆեդերացիա» ՀԿ
203. «Արցախի օյամա կիոկուշին կարատե-դո ֆեդերացիա» ՀԿ
204. «Արցախի մուայթայի ֆեդերացիա» ՀԿ
205. «Արցախի խառը մենամարտերի ֆեդերացիա» ՀԿ
206. «ԼՂՀ բազկամարտի ֆեդերացիա» ՀԿ
207. ԱՀ «Ավանդական ֆիբոռսինգի ֆեդերացիա» ՀԿ
208. «ԼՂՀ ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ
209. «Արցախի մարզիկների միություն» ՀԿ
210. «Արցախի ԿՖՄԿ» ՀԿ
211. «Արցախի ուլտիմաթ ՄՄԱ ասոցիացիա» ՀԿ
212. «Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ
213. «ԼՂՀ մարտարվեստների ասոցիացիա» ՀԿ
214. «Առաջնագծի լրագրողների լիգա» ՀԿ